

ՊՈՒՍՏԱՆԻ ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ
 Պրիմարիոյ համար
 Տարեկան 12 ֆր.
 Անգլոսոսկանացի
 Արտատպարանի համար
 Տարեկան 15 ֆր.
 Անգլոսոսկանացի
 Անտիկվարի համար
 Տարեկան 3 ֆր.
 Անգլոսոսկանացի
 1.50 ֆր.
 ԿԱՆՏԱՆԻ ՎՃԱՐՆԵՐԸ
 Երեսուցեան տղա առաջին
 քիս երեսին համար 40ս.
 Իսկ վերջին երեսին
 առ 20 սանթիմէ երեսին
 առջին սանթիմէն համար
 20 ֆր. զեղջ կրչայ :

ՇԱՐՈՒԹ

Պատկերի դրու գրեւ
 Պրիմարիոյ համար
 Редакция ваввстникъ
 Шаржумъ
 Парва
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

(20 ՍԱՆԹԻՄ)

Պրիմարիոյ համար ձեռքի
 15 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵՆԱԲՈՒԹԻ ԵՆ ՇԱՐՈՒԹ ՕՐԵՐԸ

Վառճախի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՈՒԹԻ ԵՐ ԲԱՏԱՆՈՐԳ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆՏԱՆԻ ՎՃԱՐՆԵՐԸ

Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՆ ԿԱԶՄԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՍՍԵՐՈՒԹՅԱՆ

Տօմոսկ գնել փափագողները կրնան իրեն գիմել

Ձար-Պորիս փողոց Վառճա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— 0 —

Մեր բաժանորդներէն մէկ մասը չը նայած մեր յայտարարութեանց, իրենց պարտքը չը ճանչացան, ու դեռ կը շարունակեն թերթ ստանալ :

Այդ անպարտաճանաչ մտացորդներուն ժամանակ կուտանք մինչեւ փետրուար քսան, ու այնուհետեւ պիտի յայտարարենք անունները, իսկ Պուլկարիոյ մէջ չը վճարող բաժանորդներէն օրէնքի դիմելով պիտի գտնուինք : Եարժում միշտ զրկուած է ով ուզած է, ոչ ոքի առանց ուղելու, մանաւանդ նոր խմբագրութեան միջոցին, թերթ չէ զրկուած, եւ այդ ուղղութեամբ բոլոր նամակները պահուած են :

Բաժանորդները թող հասկնան որ խմբագրութիւնս թուղթի, մարքայի, տպարանի, գրաշարի ստակ կը վճարէ, և երբ իր բաժանորդները իրենց չնչին պարտքը չեն վճարեր, խմբագրութիւնը ահագին պարտքերու տակ կ'իյնայ, թէ ինք կը վաւասուի, և թէ իրեն հետ գրամի գործ ունեցողները :

ԱԶԳ

Թերթիմացութեան մը ասիւ հարկ կը համարինք յայտնել թէ առիկ առաջ Եարժումի մէջ «Յարգանք Հեռուստանու» խորագիրը և Եանթ ծածկանունը կրող յօդուածը գրողը և վերջերս նոյն ծածկանունով երեւցած կարգ մը գրութեանց հեղինակը տարբեր անձնաւորութիւններ են :

Խմբագրութիւն

Ե. ՏԱՐԻՆ

Այս համարով թեւակսում ենք «Նարժում»ի հինգերորդ տարին, մեր ուղղութիւնը նոյնը պէտք է լինի, ինչ ուղղութեան որ հետեւեցինք անցնած չորս տարիներում :

Մենք այսուհետեւ էլ պէտք է խուսափենք ժողովրդին խաբող, նրան մտաւոր և բարոյական ոչ մի սնունդ չը տուող պոլիտիկոսութիւններից, ինչպէս և քաղաքական կամ ուրիշ հնարով, օւտ, մի միայն ջղերի վրա ալդող լուրերից, որովհետեւ համազօր ենք թէ անհամ պոլիտիկոսութիւնը և սուտ լուրերը բացի ժողովրդին վաւասուց և կոտորում են մամուլի վարկը, նրա բարոյական ազդեցութիւնը ժողովրդի առջև :

Ինչպէս անցեալ համարով յայտարարեցինք, հիմա էլ կրկնում ենք, որ «Նարժում»ը զեկավարվում է հաստատու սկզբունքներով և հայ ժողովրդի ու մարդկային ամենալայն իրէսններով, որեմն, քմահաճ, անզարգացած ընթերցողների, ամբոսի և նեղահայեացքների կայրիղները «Նարժում»ի ուղղութեան վրա ոչ մի ազդեցութիւն չեն կարող գործել :

Բաժանորդ շահելու տենչը, կամ կորցնելու վախը երբէք չեն կարող «Նարժում»ին լռեցնել կամ խօսեցնել տալ, «Նարժում»ը միշտ պէտք է խօսի և լռէ երբ պահանջում է ժողովրդի օգուտը :

Դժուար է այս ուղղութեամբ թերթ շարունակել հայ ժողովրդի մէջ, չէ՞, ընթերցող Այս դժուար է, ու շատ դժուար, բայց չորս տարւայ փորձը մեզ ցոյց է տալիս որ կարելի է : Զորս տարւայ մէջ, «Նարժում»ը արտասահմանի շուրջ ընկած հայութեան մէջ կարողացաւ այդ ուղղութեամբ թերթ կարգաւորողների մի զգալի քանակութիւն ստեղծել, ու հասանական է որ այսուհետեւ այդ

տեսակ թերթ պահանջողներ թիւը աւելի շատանայ, երբ մենք կարողանանք «Նարժում»ը բարոյական անհրաժեշտ ու մտաւոր բարձր դիրքին հասցնել, ու մենք պէտք է աշխատենք, մեր նիւթական, բարոյական և մտաւոր ուժերը ներածին չափ «Նարժում»ը աւելի բարձրացնելու :

ՎԱՐԴՕ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ոչ միայն Սուլթան Համիտի կառավարութեան մէջ է որ հակապարտադրութիւններ կը պատահին, ու, ժողովրդներուն կաշիէն քերձած գումարները այս ու այն սրիկայ պաշտօնեային ձեռքով կը վատնուին շուրթ պէս, այլ և ամբողջ Եւրոպային մէջ :

Փրանսայի Բանաման անշուշտ ընթերցողները դեռ չեն մոռցած, խաղաղական պանթաներու մէջ կատարուած զոգութիւնները, որուն մեղսակից էին շատ մը բարձր պաշտօնեաներ նոյնպէս մոռցուած չեն, անցեալները գերմանական պանթաներու մէջ կատարուած ահագին զեղծումները դեռ թարմ են, օրեր կրկին խոշոր զոգութիւններ երևան եկան Մարսէլլի մաքսատան մէջ :

Անգլիոյ Հարաւային Ափրիկէի մէջ կոտորածներուն ձի և ուրիշ պատերազմական իրեր մատակարար պաշտօնեաները խոշոր զոգութիւններ բրած են և կը շարունակեն ընել, անցեալ օր Օգէստիայի ծովային վարչութեան պետը, իշխան Ծովորուկիյ, որ կայսերական ստան արկենակիցներէն կը համարուի, կրկին խոշոր գումար մը գողցած էր :

Գոյութիւն ամէն կառավարութեան մէջ, միայնակական, հասարակապետական և սահմանադրական, ամէն տեղ հասարակութեան և ժողովրդային գրամներու վատնումներ, աշատ, անպատիվ կերպով, որովհետեւ գողերը մեծ

կապեր ունին երկիրները վարող բարձր նախարարական, թագաւորական և կայսերական շրջանակներու մէջ :

Այս փաստերը կապացուցանեն որ գոյութիւնը, ամենամեծ չափերով, կը թագաւորէ ամէն կառավարութեան մէջ, ու եթէ չի քաջալերուիր, գոնէ չի ալ պատժուիր :

Բռնութիւնը, փոքր ժողովուրդները ճզմելու, ջնջելու ձգտումը նոյնպէս ամեն մէկ կառավարութեան ախտերէն մին է :

Ֆիլիպինցիները Իսպանացոց ձեռքէ ազատող Ամերիկացիք, հիմա իրենք կը ճզմեն առ մէկ բուռն ժողովուրդը, Գերմանիա Լեհերը կը խեղդէ, սոմեն մէկ միջոց գործ գնելով, Ռուսիա Ֆիլանտացիները և Լեհերը Անգլիան Պօէրները : Կը ճզմեն, կը տրորեն, կը ջնջեն :

Սուլթան Համիտ առ ամենը տեսնելով կը խեղայ և քրիտոնեաներու համար միջամտելու յանդգնող եւրոպացիներու կը պատասխանէ :

«Թագակից ախպրտիքս, գուք ալ նոյնը կընէք, ինձմէ ի՞նչ կուզէք : Ու եւրոպացիք ձայներնին կը կտրեն, թէեւ չեն կարծիր, չեն խօսիր :

Սուլթանները պիտի շահուին, երբ քաղաքակիրթ մարդկութեան վարիչները իրենք բարոյական իտէալական բարձրութեան հասնին :

ԿԷՏ

ՌՈՒՍԻՈՑ ՍԱՏՇ

— (I) —

Անցեալ օր Փրանսական երեսփոխանական ժողովին մէջ ընկերվարական երեսփոխան Մարսէլ Սամպայ յայտարարեց որ Ռուսիոյ հնչումով փրանսա առանց լուրջ բան մը ընելու իր նախատրվիլը ետ քաշեց Միտիլինէն,

և նոյն ճնշումով էր որ հասարակացեալ թեան կառավարութիւնը ստիպուած եղաւ Հայկական խնդրի մասին լռել։ Արտաքին գործոց նախարար Տէլքասէ յայտարարեց որ այդ խնդրին միջոցին Պեթրոպոլիսէն ոչ մէկ ճշմարտութեամբ գործ դրուած կառավարութեան վրայ Սամպա պնդեց որ եղած է. ու Պոլսոյ մէջ, ուստի բնականին միջոցաւ։

Նախարարը չը կրցաւ սրոշակի կերպով վերջին մեղադրանքը ջրել. ուսկէ պարզութեամբ որ այս անգամ ալ Ռուսիա խանգարեց Հայոց դատին։

Արգեօք՝ մեր Ռուսաստանները ոչ չաղբութիւն դարձուցին այս կէտին վրայ. կոտորածներու միջոցին երբ Ռուսիա լռելիայն կը քաջալերեր Սուլթան Համիտը, մեր Ռուսաստան քաղաքագէտները կը յայտարարէին թէ՛ ատոր պատճառը ան է որ Ռուսիա կը կարծէ թէ Հայերս Անգլիոյ, իր հակառակորդին, ձեռքը խաղաղիք ենք, որովհետեւ մեր ծրար յիշատակաւ կուսակցութիւններուն կարեւոր մարմինները Լոնտրոյի մէջ կը գտնուին. ու Անգլիա է որ շարունակ Հայկական խնդրը հրապարակ չը նետէ։

Այս անգամ պայմանները բոլորովին տարբեր էին. հայկական խնդրով զբաղողը Ռուսիոյ գաշնակից միասնան էր, հայկա-

կան խնդրը որուն նիւթ գարնանը Ֆրանսական մամուլն էր, յեղափոխական մարմինները մեր քանաչափ կառավարութեան կը գիտէին, քանոնցմէ մին նոյնիսկ ուստի մարմին դիմեց. գիմեց նաև մեր Ձեռք պապան, հլու, չափէն աւելի գիւտանդիտորէն խմբագրուած ազնորով մը. սակայն ուստի կառավարութիւնը կրկին արգելք հանդիսացաւ. կրկին վարագոյրի տակէն ի վրաս մեր գաղտնի գործեց. Ալ ի՞նչ փառս կուզեն մեր՝ ուստի բան մը սպասող գիւտանդէտները։

Միասնայի արտաքին գործոց նախարարը, որ հայ պատգամաւորութիւն կը դուռնէր սիրով, որ պարզօրէն կը յայտարարէր թէ հայկական խնդրն ալ պիտի դնէ Սուլթանին առջեւ, յանկարծ քանի մը օր վերջը, ելաւ և յայտարարեց թէ՛ Պէրլինի գաշնագրութիւնը միայն միասնա չէ որ ստորագրած է, միասնա միայնակ բան մը չը պիտի կրնայ ընել հայոց համար, ձիւղ այնպէս. ինչպէս նախապէս Սուլթանին սպաննացող Սօլիզպիւրի, ելաւ յայտարարեց թէ՛ անգլիական նաւատորմիցը հայկական լեռները հասնիլ չի կրնար։

Միասնա միակ բան մը չի կրցաւ ընել. Անգլիա նոյնպէս չը կրցաւ, Ռուսիա չի ուզեր, Գերմանիա չի ուզեր, Աւստրիա անտարբեր է. Իտալիա մինակ նոյնպէս բան մը չը պիտի կրնայ ը-

նել. որովհետեւ ամենքն ալ, ամեն ժամանակ Ռուսիոյ քանդիչ մատին գաղտնի և յայտնի շարժմանը պիտի հանդիպին։

Ուրեմն գիւտանդիտորէն վարուելէն, գիւտանդիտորէն քննելէն ի՞նչ շահ ունինք. ոչ մէկ շահ, այլ խոշորեկ ֆլաս մը. որովհետեւ մեր ժողովուրդը կը վարժեցնենք, շարունակ, առանց մեծ ճիգ մը ընելու, յուսալ, սպասել, մերթ Անգլիաէ, մերթ Միասնայէ, մերթ Ռուսիայէ ...

Կրան թէ պէտք է Եւրոպայի ժողովրդային համակրութիւնը գրաւել, վերջին ժամանակներս քանի մը հայ հերոսներ, որոնք կուտի գաշտին մէջ երեւցան, թուրք զինուորու քուրդ սպաննեցին, կամ թէ իրենց գաղափարին համար քաջարար զոհուցան, աւելի ցնցեցին Եւրոպական ժողովուրդները, քան թէ վերջին քանի մը տարուան քարոզները։

ուով տապալուեցան, ու դեռ պիտի տապալուին գալիք նախարարութիւններն ալ, եթէ հնար մը չը գտնան այդ տաղնապը զգալի շարժում մը մեղմացնելու, մինչև որ յաջող տարիննուր ընթացքին մէջ երկիրը կարող ըլլայ բոլորովին շտկուիլ։

Այսօր, Պուլկարիոյ պետական մարդիկ երկուսի բաժնուած են. մէկ մասը կը կարծէ որ Պուլկարիա անպատճառ պարտաւոր է փոխառութիւն մը ընել, որպէս զի թէ կարենա իր ստիպողական պարտքերը վճարել, առանց ժողովրդը կրկին հարկերով ծանրալեռնելու, և թէ ժամանակ վատերկի եկրին ելեւմտական վիճակը կարգաւորելու համար։

Իսկ միւս մասն ալ կուզէ ապացուցանել, թէ երկրին ելեւմտական վիճակը այնչափ ծանր չէ, որ ան ստիպուի ծանր պայմաններով փոխառութիւն ընել, պուլկար ժողովուրդը ներքին մեծ զոհողութիւններով պիտի կարենայ այս ծանր վիճակէն ելլալ։

Ահա այդ երկու հասանքներուն հետեւ թողքալական կուսակցութիւններու վարիչները կը պտըտին ժողովրդին մէջ ու կը բացատրեն իրենց համոզումները։ Պուլկար ժողովուրդը երկու կերպով մէջ մնացած է. այն ժողովուրդը որ երկիրը կը պահպանէ, Մանր պայմաններով փոխառութիւն ընելէ ալ կը վախենայ, ներքին մեծ զոհողութիւն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՐԴԵՍՊԱՆԸ

Ջորան մայր, ու փուքտտ գիւններէ մին էր. Տարօ՛ր հովաններէ միոյն մէջ. ձգնեբու տակ գրեթէ թաղուած գիւղին մէկ անկիւր տեղաւորուած անտիկ մը սննկին օջախին մէջ խառնիխառն իրարմէ անբը ճարձատեղով կը վառէին և բոցին գայարուաներով սենեակը կը լուսաւորէին միթիթ լուսով մը. կը բակին դիմացը ձերուկ մը նստած էր. իսկ անոր քովիւր մանկամարդ. դալկաղէմ դեռատի կին մը, բոլորովին հիւժուած, Կինը, Արմենուհին, ձերուկին աղջիկն էր. միակ գուակը և միակ միսիթարութիւնը աշխարհիս մէջ։

Արմենուհին շարունակ կրակին նայելով մրտփելու վրայ էր. բայց հազը զինքը հանգիստ չէր թողուր։ Փուքը կը ֆլէշար, կը ունար, ու ձգնը կը գարնէր տան դրանը. կարծես կուզէր խորտակել զոյն և ձիւնի կոյտերու տակ թաղել. հայր և աղջիկ լուռ էին. հայրը աղջիկը կը դիտէր շարունակ, և այս կը քաշէր. կը սենար թէ լնչպէս իր գուակը կը ստանջուի սենդէն, ինչպէս այստեղը տարօրինակօրէն կարծրած են, և ինք բան մը չի կրնար բնել։

Յանկարծ Արմենուհին, կարծես

սարսափելի երազէ վախցած, ցնցուելով հորը ըսաւ։

— Հայր, հինգ օր է որ Միսոն չը կայ. այսչափ չէր ուշանար. ո՞վ գիտէ ուր է այս սարսափելի զուրտին, ո՞ր լեռան վրայ, գագաններն ալ չեն դիմանար այս օրին։

— Այդ մասին մի մտածեր Արմենուհի։ Միսոն մեր լեռներու ամեն ծակու ծուկը գիտէ. ո՞վ գիտէ թէ հիմայ ուր տեղ ընկերներու հետ խորոյի դիմաց նստած, ժամանակ կանցընէ։

— Գիտեմ հայրիկ, բայց այսօր սիրտս շատ անհանգիստ է. գէջ մըսքեր կանցնին ու կը դառնան գլխուս մէջ ...

Այս խօսքերէն յետոյ, Արմենուհին կրկին լռեց. ձերուկին կրկին ինկաւ իր ծանր խոհերուն մէջ։

Յանկարծ դրան քով ձիւն խորոյն լուսեցաւ. Արմենուհին ամբողջ մարմնով ցնցուեցաւ. իսկ ձերուկին, նախ շուտեցաւ ապա մտեցաւ դըրան. Արմենուհին աչքերով հոր հետեւեցաւ. դուռը զարկին։ Մերուկին դուռը բացաւ և դուրս ելաւ. նա բոլորովին շուտեցաւ որովհետեւ առջեւ տեսաւ գիւղին դղրը և զապ թիթէ մը։

— Ի՞նչ կայ, հարցուց ձերուկին։

— Ի՞նչ ոչինչ. պատասխանեց զապ թիթէն, ընդհակառակը շատ ուրախ լուրեր. Միսոյի քովէն կուգամ. ան զիս զրկեց որ ձեզ իմաց տամ թէ ինք Սուլթանին հնազանդած և իր ընկերները յանձնած է կառավարութեան. հիմա, կարեւոր պաշտօն ըս-

տացած է և վաղը ինք պետի գայ կինն ալ, քեզի ալ քաղաք, Մուշ, տանելու։

Մերուկը կուրծքը բռնեց, քիչ մը նայ շնչակաւուր ըլլար. վերջապէս ուշքի գալով պատասխանեց.

— Շատ աղէկ. Աստուծ կամք թող ըլլայ. Շուրտ է, բարի գիշեր, և ներս մտաւ, որոշելով Արմենուհուն ոչինչ չի յայտնել. ու դառնալով աղջկան լուսաւ։

— Արմենուհիս. Մարգարէն էր. Մըլուսն է զրկեր իմաց տալու որ ինք առուօտ պիտի գայ։

Արմենուհին հաւատաց և կարծես հանգստացած գլուխը դրաւ բարձին վրայ ու քնացաւ։

Դարձեալ մեռելային լուսութիւնը տիրեց աղքատիկ տնակին մէջ. մերուկը կը տանջուէր. Դաւաճանի մը մատնիչի մը տանը մէջ գտնուիլ զինքը կը ծակծակէր։

Յանկարծ Արմենուհին սկսաւ երսզին մէջ խօսիլ.

— Չէ, Միսո, այս կեանքը ինձի աւելի հաճելի է. Այս, դարձեալ աղքատ ենք. դարձեալ ուտելու հաց հազիւ կը գտնամ. բայց դուն հիմա ֆէտայի ես. հայ գիւղերուն, հայ աղջիկներուն պաշտպան. թուրքի քերտի արիւն թափող, Հիմա գեղաւելի կը սիրեմ. հիմա դուն թուրքին ու քրդին առջեւ չես դողար, չես քծնիր. Բայց միշտ այդպէս մնաս. ի՞նչ մեռնիմ ալ, հոգիս պիտի ինչոյս. մտնիչ, դաւաճան չըլլաս ...

Խեղճ հայրը սկսաւ արտասուել ու մտածել։

— Խեղճ աղջիկս, իսկ եթէ վաղը Իմանաս որ ամուսինդ վատ մըն է, դաւաճան մըն է, որչա՛փ դժբաղդ պիտի լլլաս։ Սրգեօք պիտի դիմանաս, ո՞ր, չը պիտի դիմանաս, պիտի մեռնիս, ցաւած հոգիով. խոցոտուած սրտով։ Ախ Աստուած, ի՞նչպէս աղջիկս ազատեմ այդպիսի անաշանքներէ, ի՞նչպէս ընեմ որ հանգիստ մեռնի ...

Մի քանի վայրկեան ձերուկը մտածեց. գէմքը միջնեցաւ. աչքերն խորն ինկան, ու յանկարծ ուրախութեան ժպիտ մը փայլեցաւ անոր կնճառ գէմքին վրայ։

Գինաց պահած դաշոյնը վերցուց, մտեցաւ աղջկան. կամաց գլխուն վերը չը քեցաւ, ճակատը համբուրեց, քնքաբար, ու դաշոյնը արագ հարուածով աղջկան սիրաբ մխեց ...

Արմենուհին ձիւն անգամ չարձակեց. հարուածը ուղիղ էր և վայրկեանակա մահ պատճառեց. Մերուկը չոքեցաւ աղջկան առջեւ—արտասուքը սկսան թափուիլ անոր աչքերէն ու նա հեկեկալով շնչեց։

— Էհ, աղջիկս, երջանիկ և հպարտ մեռիր. մի գիտնար ամուսնուդ դաւաճան ըլլալը. Հանգիստ եղիր. ան դաւաճանեց, ես կիրթամ անոր տեղը բռնելու. Տարօնի ֆէտայիներուն շարքին մէջ, Մնաս բարով ...

Կրկին ու կրկին ձերուկը համբուրեց աղջկան գետ տաք այտերը— տընկն դուրս փախաւ ...

ներէն ալ Առաջին պարագային կը սարսափի իր ներքին հարստութիւնները օտարի մը յանձնելէ, երկրորդ պարագային՝ ազգատանալ է:

Մէկ խօսքով համակրելի Պուլկարիան ծանր պայմաններու մէջ կը գտնուի: Փափաքելի է որ Պուլկարիոյ պետական մարդիկ կարենան իրենց հայրենիքը վտանգէ ազատել:

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Պուլկարիոյ հայերու մէջ սովորութիւն դարձաւ որ հասարակական հիմնարկութիւնները հաշիւ ներկայացնեն հասարակութեան, որբախնամները և աղքատախնամները շարունակ հաշիւ կը ներկայացնեն հայ հասարակութեան: Միայն թաղականութիւնները գեաւ այդ գեղեցիկ սովորութենէն կը խուսափին:

Այսքան տարիներու մէջ, եթէ չենք սխալիր, գեաւ ոչ մի քաղաքի թաղական խորհուրդ հաշիւ ներկայացուց այն հասարակութեան, որմէ գրամ կը ստանայ եկեղեցիները և դպրոցները պահպանելու համար:

Ի՞նչու այդ խուսափումը, կամ ի՞նչու այդ գեղեցիկ սովորութեան չը գործադրուի:

Մեր թաղական խորհուրդները պէտք է այդ սովորութիւնը ընդունին և անպատճառ Աստուծոյ հասարակութիւնը պիտի համոզուի որ իր տուած գրամները իրենց նպատակին կը ծառայեն: Երկրորդ որ նա կը տեսնայ իր զոհողութեան չափը ու համոզուելով որ այդ զոհողութիւնը չը բաւեր իրեն դպրոցները կանոնաւոր կերպով պահելու, աւելին եւս պիտի զոհէ:

Տասնեակ տարիներ է որ թաղականութիւնները առանց ունի տեղ մը հաշիւ ներկայացնելու կը կառավարեն մեր հասարակական հիմնարկութիւնները: Այս սօր ոչ մէկ հասարակութիւն գրութիւն գիտէ թէ իր ազգային հիմնարկութիւնները որչափ եկամուտ ունին, որչափ ծախք չը գիտեր նաև թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուին այդ կառուածքները, գեաւ կա՞ն, թէ արդէն կորսուած են:

Մենք կառայարկենք Պուլկարիոյ ամեն քաղաքներու թաղականութիւններուն սկսիլ հաշիւներ ներկայացնել, կառաջարկենք և ժողովրդին, իրեն իրաւունքները պաշտպանել և հասկնալ իր հիմնարկութիւններուն ելեւմտից վիճակը:

ՅՈՒՄԱՆՅՈՒՆ «Ա.—ԼՆ.»-ԻՆ

Անարժէք պողոտութեան անհայն գեղեցիկ տիտղոսը, որով ձեր անիմաստ գրուածը պատուելու զամ էր Նոյն այն թերթը, որուն մէջ ձեր բոլոր ծաղրելի թերութիւններովը փայլելու համար, պարտաւորեցաք ազգութիւնամտութեանց դիմել:

Ըսած իս համազուելու համար կը բաւէ ունի մէկու մը ձեռք տնցնել «Իրաւունք»-ի 16 յունուարի թիւը, և չորրորդ երեսին վրայ արագ կենարկ մը նետել: Տոն պիտի գտնէ ձեր գրուածին թէ՛ պատասխանը և թէ՛ արժէքը:

Ըստ ձեր յայտարարութեան, եթէ երբէք ներկի է հաւատալ Շուճալի հոգաբարձութիւնը պատրաստ է եղբւր պատասխանել մեր հարցման: այդ իսկ էր արդէն մեր ուզածն ալ: հետեաբար մեզ կը մնայ միայն սպասել, զարմանալով և միանգամայն ցաւելով մինչև ցարդ պատասխանած չըլլալուն վրայ:

Ձը մոռնանք այս առթիւ ըսել որ՝ եթէ երբէք Շուճալի պատմ. հոգաբարձութիւնն ալ պանարժէք պողոտութեանց հեղինակին պէս կը կարծէ, թէ անհրաժեշտ է գիտնալ այն անձին անունը, որ կուզայ բողոքել կատարուած անուարարի զեղծման մը դէմ, մենք պատրաստ ենք ի հօրկին ոչ միայն մեր անունը, այլ և մականունն ալ գրել խոշոր տառերով:

Մէկ յանձնարարութիւն մը միայն ընել աւելորդ չենք համարիր: Պիտի խնդրենք Շուճալի պատմ. հոգաբարձութեանէն, որ քանի մը բառով լիննալիք իր պատասխանը պանարժէք պողոտութեանց հեղինակին անճարակ գրչին վաստիւր անխոհեմութիւնը չընէ, որովհետև ի վերջոյ իւր պատասխանն ալ կրնայ իմբագրատան զամբիւղը մտնել, այլ ևս լոյս աշխարհ չը տեսնելու պայմանաւ, և ինքն ալ իւր պատուելի տնօրէնին նման կը պարտաւորուի ազգեցիկ բարեխօսներու միջամտութեան դիմել:

Շուճալի

ԳԵՂՈՒՆԻ

Ստացանք «Գեղունի»-ի երկրորդ համարը, նուիրուած անմոռանալի Հայր Ալիշանին:

Այս «Գեղունի»-ն իր մէջ կը պարունակէ Հայր Երամանի կարճ, ոգեւորուած, և համազգային եզրայրութեան ախոյեան մամուլին դրօշը պարզելու հրաւերով նախօգուածը:

Այդ զգայուն նախօգուածին կը հետեւէ Հայր Թորոսեանի գրած Ալիշանի կարճ կենսագրականը, զգայուն և ակնածանքով լի ոճով գրուած:

«Գեղունի»-ն գրեթէ ամբողջովին զարդարուած է յարգելի նահապետին պատկերներով: Երկտասարդ հասակէն սկսեալ, մինչև մահուան անկողնին մէջը՝ արդէն մահացած:

Հապա կան քանի մը նշանաւոր Եւրոպացիներու պատկերները, կարճ կենսագրական տեղեկութիւններով:

Թորոսեաց կուսանք ամեն հայրնթերցողի գոնէ այս համարը ձեռք բերել, ի հարկէ գնելով, ոչ թէ ձրի: Աս համարը իր քովը ունեցող հայը շարունակ կրնայ մեր ազգին սիրելի բանաստեղծը և գիտնականը իր գիմացը ունենալ, անով հրճուիլ պարծենալ և ոգեւորուիլ:

... Խմբագիր
Ներկայիս կուզանք խնդրել ձեզմէ, որ «Նարժու»-ի յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ անկրն մը շնորհել սոյն հաշուեկշիւին:

ՎԵՑԱՍՏԵԱՅ

ՎԵՑԱՍՏԵԱՅ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԵԱՆՅ
ՎՂՔԱՍՏԻՍՏԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍՃՈՒԲԻ
1901 Յուլիս 1 — 1904 յիւլիս 31

Table with 2 columns: Item name and Amount. Items include Առաջին ութամսայէ մնացած պատրաստ դըրամ, Պնակի հասոյթ, Բաժնեգիրներէ, Երկու եղբրու մորթելէն և իւղէն, Մատաղի հանգանակութեանէ գոյսացած, Շուկան պտայուած, Գանձանակէ, Մեռելակառքէ հասոյթ, Ամուսնութեան առթիւ նուէրներէ, Տօնախմբութեանց առթիւ գտնձանակէ, Պատահական նուէրներէ, Կնքահայրութեան առթիւ նուէրներէ, Ազգային պանդոկէ եկած վարձք, Մողկեփունջէ նուէր

Table with 2 columns: Item name and Amount. Items include Դրամական օգնութիւն զանազան անձանց, Թաղիս ազգատիկ ուսանողաց զգեստ և կոշիկ, Մատաղի համար առնուած երկու գերու և այլ և այլ ծախսոց համար, Փոխ տրուած ստակ զանազան անձանց, Ճանապարհածախս ազգատ ճամբորդաց, Վճարուած հին պարտքի Մ. Վարդանեանի, Դեղագործի վճարուած առ հաշիւ, Դեղագործի վճարուած նոր առնուած դեղերու համար, Մեռելակառքի կառուպանին, Շուկան գանձանակը, պատցնողին նուէր, Ձանազան ծախք, Դրանական ծախք, Պատրաստ դրամ

Ծանօթ.—Մանրամասնութեանց համար տեղեկութիւն առնել փափաքողք կը հրաւիրուին դիմել ընկերութեանս գործադիր ժողովոյ դիւանին:

ՊԱՏՃԵՆ

Արքեպիսկոպոսարան Կարնոյ Ընկալագիր:
«Երկրաշարժի հայ Արկածելոց ինպատ յանձնաժողով» Մեծ Ալիքսան էֆ. Սահաթեանի ձեռքով Վառնաէն Մեծ. Գալուստ էֆ. Սահաթեանէ 28 քսան և ութ օսմ. ոսկի ստացաւ իւր 1901 զեկտ. 17 թուակիր գրութեանը համաձայն եւ կուտայ սոյն ընկալագիրը:
Կարնոյ 4 յունուար 1902
Երկրաշարժի Արկածելոց Յանձնաժողով (ստորագրութիւնք)
Նախագահ. Մ. Վրդ. Տէր Եղիաբան
Ատենապետ. Ա. Մէլքիսէղէկեան
Ատենաղպիր, Մ. Մկրտիչեան
Գանձապետ. Փաւլուղեան, (կնիք)

Արքեպիսկոպոսարանի Կարնոյ
Մեր մօտ մնացած 39-35 լէֆի փոխարժէքը 1 1/2 օսմ. ոսկի գրուեցաւ Կարնոյ որ վճարուի սոյն Արկածելոց Յանձնաժողովին:

Գ. Ո.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Իշխման անաշնորհ Մուրա-
նան եպիսկոպոսն ալ մասնաւոր
նամակով մը խնդրած է Երէջեա-

— Ալիանս Թրանսէս տարեկան
35 ոսկի յատկացուցեր է Կատը
գլխի ազգային Արամեան վար-

— Սահակ եպիսկոպոս Խաչատր-
եան նամակ զրկած է Երէջեան
եպիսկոպոսին, որով մանրամասն

Այդ նամակէն կը տեղակաց-
ուի որ Պոլսաբնակ վեզար շոր
մը երկու քահանաներու միջոցաւ

կը լսուի թէ Երէջեան մտա-
դիր է այդ նամակը հաղորդել
Խառն ժողովին :

— Սոնասարեան վարժարանի
խնամակալութիւնը իր վերջին
նիստին մէջ խորհել է վարժա-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Կառավարութիւնը որոշած է մի-
ջոցներ ձեռք առնելու որպէս զի Թը-
րապուզի Բոսանի կողմէն գրաւուե-

— Բարիզէն Միւնիք պէյը Թուրքիոյ
պարտքերը կարգի բերելու ծրագիր
սը զրկած է Սուլթանին : Սուլթանը

— Յրաուի թէ յերիտասարդ թուրքի-
րու ժողովը տեղի ուննցեր է Բարիզի
մէջ : Թուրքերը իրենց որոշումներով

— Կրտսէի թէ յերիտասարդ թուրքի-
րու ժողովը տեղի ուննցեր է Բարիզի
մէջ : Թուրքերը իրենց որոշումներով

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Ութընթիւ հաւաքուած Պօլս պատ-
գամաւորներուն ժողովը պարզ ժողով
մը եղած և քանի մը ժամ Բիւսն տե-
ւած է :

— «Ճէյլի թէյլկրաֆ» կը ծանուցա-
նէ որ հոլանտական կառավարութիւ-
նը կը հրաժարի այլեւս և միջամտու-
թիւն մը ընելու Ինպասա Պօլսներու,

— Պրիւքսէլէն կը հաղորդեն որ պօ-
էր պետերու մէջ լուրջ սահմանաձա-
նութիւններ կան :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Նախարար Բնչէլի սպանու-
թեանն լետոյ Սօֆիայի մէջ շատ
մը մարդիկ ձերբակալուեցին, ու-
րոնք առանց արտօնութեան վէճք

— Հայ սարիւր մը կռուի բռ-
նուելով հայ ժամագործի մը հետ,
մկրատովը ժամագործին գլխուն

Սարիւրը ձերբակալուեցին,
իսկ ժամագործը հիւանդանոց
տարելու են :

— 0 —

Ո Ո Ւ Ս Ի Ա

Ռուս կառավարութիւնը պաշ-
տօնապէս, մինչեւ ցնոր կարգադ-
րութիւն, օտարահայտակներուն
կարգիւ Սլաւիան երկաթու-

— 0 —

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Չարին շորս օր Ֆրանսայի մէջ
մնալը 4 միլիոն ֆրանք արժեք է
ֆրանսական կառավարութեան

Այդ մասին ընկերվարականները
խիտ կերպով կը բողոքեն :

— Բարիզի մէջ ձերբակալուեց
է ուսու իշխան մը—Սալիւն—Լո-
թիէնի որ շատ մը խարդախու-

Այդ իշխանը երբէմն կուզէր
Պուլկարիոյ իշխանը ըլլալ :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանական գործարաններէն լեհ
գործաւորները կարողաքսուին :
— Կրտսէի թէ Անգլիա վէյ խա վէյը,

Գերմանիոյ պիտի զիջանի, և ինք
ուրիշ կայան մը պիտի գրաւէ :

— Գերմանական կայսրը յայտարա-
րած է որ պալատը չը պիտի ընդու-
նուին ամէն այն անձերը, որոնք հո-
գեւտուութեամբ կը զբաղին կամ թէ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ֆիլիպպէի «Հայկական երգեցիկ
խումբը» առ շրջանին մէջ վերս-
կսած ըլլալով արգէն իր պա-
րտաճանքները, ձեռնարկած է

Այդ առթիւ երգեցիկ խումբի
վարչութիւնը ներկայիս կը յայտ
նէ Պուլկարիոյ և արտասահմանի

Սերտասահմանի համար 35 անթ.
Ֆիլիպպէ վարչ. «Հայկ. երգե-
ցիկ խումբին» :

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդես արևելայ, հողագործական,
գիտական և արտասահմանական

Հիմնադիր տնօրէն
Գարեգին Լ. Մեծաստեղան

Հրատարակուած է Ըրգ թիւը,
չանկան րովանդակութեամբ :

Տարեկան բաժնեգրին 12 ֆր. դի-
մել հիմնադրին, 23 rue de la Odeon

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, մի-
ջազգային իրաւունքի, ընկերական
հարցերու, գրական և զեղարուես-

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

— 0 —

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը սպազարուին ամէն լեզուէ
այցեատման, հասցեատման, համա-
կազուխ, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազդ :

Գիները յոյժ գլուրամտուցելի :
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ և փութով կը կատար-

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻՆ

ՆԻՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ Ուս Միութեան
նամակ ուղարկելու եւ առհասարակ
ամէն տեսակ գիտում ընելու համար
պէտք է գիտել հետեւեալ հասցէով

Սուխ Ժընէվ

Կարգողը Յանձնաժողով

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ լրագիրները բոլոր իմրագիր-
ներէն ինչովու մ է իրենց թերթերից
մի մի օրինակ զրկել հետեւեալ հաս-
ցէով :

Կ. Արարեանց ձիպուցի (Մէր Ռուժ)
բաժանորդակիցը կուղարկուի հէնց
որ առաջին համարները ստացին :

Կ. Արարեանց :

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна